



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱԿՈՒՄԲԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 11-րդ կետի, «Փաստաբանների պալատի կանոնադրության» 17.5 կետի 12-րդ ենթակետի պահանջները,

Ղեկավարվելով ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) նախագահի 19.05.2015թ. թիվ 105-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ակումբի գործունեության կարգի 3.3 կետի պահանջներով,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամկետը լրանալու հիմքով լրացել է Պալատի ակումբի համակարգողի լիազորությունները, և նկատի ունենալով փաստաբան Մարինե Ֆարմանյանի համաձայնությունը,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ակումբի համակարգող նշանակել փաստաբան Մարինե Ֆարմանյանին (արտոնագիր՝ համար 1754)՝ երկու տարի ժամկետով:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Մարինե Ֆարմանյանին:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Սիմոն Բաբայան



9 հունվար 2026թ.
թիվ 3-Ա
ք. Երևան